



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 02.12.2015

թվականի թիվ 03 որոշմամբ,

Գիտական խորհրդի 27.03.2019 թվականի

թիվ 04 որոշմամբ հաստատված

փոփոխությունով

Ռեկտոր Ա.Ա.Սուրադյան

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր: Սույն կանոնակարգով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առանձնահատկությունները սահմանված են հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետը:

3. Ամփոփիչ ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է:

2. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը (նախագահ, տեղակալ և անդամներ) կազմավորվում է ըստ որակավորման մակարդակների, յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) Համալսարանի կամ գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և (կամ) կոչում ունեցող մասնագետներից:

6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով Համալսարանի աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականություններն իրականացնում է նախագահի տեղակալը:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Համալսարանի մեթոդական ուղեցույցներով:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը տվյալ մասնագիտության կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

11. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը և ամփոփիչ քննությունների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

12. Ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման «Ռազմական բժշկություն» առարկայի քննական հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀՀ Պաշտպանության նախարարի և ռեկտորի համատեղ հրամանով:

13. Հաշվի առնելով առողջապահական բնագավառի մասնագիտությունների առանձնահատկությունները՝ Համալսարանի ռեկտորը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը:

3. ԱՄՓՈՓՈՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է ամփոփիչ քննությանն (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով, որը իրականացվում են հետևյալ կարգով՝

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՄՓՈՓՈՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԸ
Բժշկության ֆակուլտետ	ամփոփիչ քննություններ
Ստոմատոլոգիական ֆակուլտետ	ամփոփիչ քննություններ
Ռազմաբժշկական ֆակուլտետ	ամփոփիչ քննություններ
Դեղագիտական ֆակուլտետ	ա. ամփոփիչ քննություն՝ էլեկտրոնային թեստավորման եղանակով,
ա. բակալավրիատ	բ. ամփոփիչ քննություն՝ էլեկտրոնային թեստավորման եղանակով և բանավոր քննությունների հանձնում կամ
բ. մագիստրատուրա	էլեկտրոնային թեստավորման եղանակով և թեզի պաշտպանությամբ
Հանրային առողջության ֆակուլտետ	ամփոփիչ քննություն՝ էլեկտրոնային

Մագիստրատուրա	թեստավորման եղանակով և թեզի պաշտպանությամբ, իսկ «Բուժհաստատությունների կառավարում» մագիստրոսական ծրագրի դեպքում՝ միայն թեզի պաշտպանություն
---------------	--

15. Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով ուսուցումը և կուտակել են համապատասխան կրեդիտներ: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է ֆակուլտետի դեկանի կարգադրությամբ: Ամփոփիչ քննության կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

16. Ամփոփիչ քննության կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նախագահի տեղակալի ներկայությունը պարտադիր է: Ամփոփիչ քննության կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունից առաջ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է ռեկտորի հրամանով:

17. Ամփոփիչ քննությունը ներառում է՝

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժշկի» որակավորման աստիճանի համար քննություններ՝ «Վիրաբուժական հիվանդություններ», «Ներքին հիվանդություններ», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկաներից,

2) Ռազմաբժշկական ֆակուլտետի «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությամբ «Բժշկի» որակավորման աստիճանի համար քննություններ՝ «Վիրաբուժական հիվանդություններ», «Ներքին հիվանդություններ», «Ռազմական բժշկություն» (ռազմադաշտային վիրաբուժություն, ռազմադաշտային թերապիա, անձնակազմի բժշկական ապահովման կազմակերպում, բժշկական ծառայության կազմակերպում և մարտավարություն) առարկաներից,

3) Ստոմատոլոգիական ֆակուլտետի «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ «Բժիշկ ստոմատոլոգ» որակավորման աստիճանի համար քննություններ՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» առարկաներից,

4) Դեղագիտական ֆակուլտետի՝

ա. «Դեղագիտություն» մասնագիտությամբ «Դեղագիտության բակալավրի» որակավորման աստիճանի համար, իսկ 2019 թվականից սկսած «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի բակալավրի» որակավորման աստիճանի համար քննություններ «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա», «Դեղագործական քիմիա» առարկաներից,

բ. «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի մագիստրոսի» որակավորման աստիճանի համար՝ քննություններ «Դեղագործական քիմիա», «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա» առարկաներից:

18. Համալսարանի ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, ռազմաբժշկական, դեղագիտական ֆակուլտետների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է ամփոփիչ քննությունների հետևյալ 3 հետևյալ փուլերից՝

1) Գործնական ունակությունների գնահատում,

2) Առարկայական թեստավորում,

3) Առարկայական բանավոր քննություն:

19. Ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետների շրջանավարտների գործնական ունակությունները գնահատվում են համաձայն Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի կողմից՝ տվյալ ուսումնական տարվա համար սահմանված չափորոշիչներով՝ համաձայն հետևյալ պահանջների.

1) յուրաքանչյուր առարկայից շրջանավարտի գործնական ունակությունները գնահատվում էուսանողի կողմից ընտրված տոմսով: Քննական տոմսն ընդգրկում է երկու հարց,

2) շրջանավարտն իրավունք ունի քննական տոմս վերցնելու մեկ անգամ, որը չի թույլատրվում փոխել,

3) պատրաստվելու համար շրջանավարտին տրվում է 10 րոպե,

4) առարկայի գործնական ունակություններից յուրաքանչյուր հարց գնահատվում է 1-ից 5 միավոր,

5) յուրաքանչյուր քննասենյակում հանձնաժողովի բոլոր անդամները միաժամանակ լսում են միայն մեկ շրջանավարտի պատասխանը,

6) շրջանավարտի գիտելիքները գնահատվում են ըստ հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի, որը չի ամբողջացվում:

20. Ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետներում գործնական ունակությունների գնահատման փուլն ատեստավորվում է ստուգարքով:

21. Առարկայական թեստերը կազմվում են հիմք ընդունելով Համալսարանի գիտական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 03 որոշմամբ հաստատված «Ստուգարքների և քննությունների անցկացման ու հանձնման կարգի» պահանջները:

22. Առարկայական բանավոր քննությունը անցկացվում է համաձայն հետևյալ պահանջների՝

1) տոմսն ընդգրկում է երեք հարց,

2) շրջանավարտն իրավունք ունի քննական տոմս վերցնելու մեկ անգամ, որը չի թույլատրվում փոխել,

3) հանձնաժողովի անդամների լրացուցիչ կամ ուղղորդող հարցերը պետք է լինեն տոմսում ընդգրկված հարցերի շրջանակներում,

4) շրջանավարտի գիտելիքները գնահատվում են ըստ հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի, որը չի ամբողջացվում,

5) քննական տոմսի հարցերին նախապատրաստվելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է առնվազն 20 րոպե ժամանակ,

6) հանձնաժողովի բոլոր անդամները միաժամանակ լսում են միայն մեկ շրջանավարտի պատասխան,

7) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

23. Ամփոփիչ ատեստավորման գնահատականների ամբողջացումը կատարվում է մեկ անգամ՝ առարկայական բանավոր քննություններից հետո, ըստ քննական առարկաների համար սահմանված փուլերի՝ ելնելով Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի կողմից այդ փուլերի համար սահմանված չափաբաժիններից:

24. Առարկայական բանավոր քննության և թեզի պաշտպանության անբավարար գնահատականի դեպքում որպես վերջնական գնահատական նշանակվում է առարկայական բանավոր քննության կամ թեզի պաշտպանության բացասական նիշը:

Առարկայական բանավոր քննության անբավարար գնահատականի դեպքում նախորդ փուլերի գնահատականների հետ միջինացում չի կատարվում և նշանակվում է բանավոր փուլի գնահատականը:

25. Ամփոփիչ ատեստավորման առարկայական բանավոր քննության հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները: Դրանք հաստատվում են ֆակուլտետների ուսումնագիտական խորհուրդներում և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին են տրամադրվում ամփոփիչ ատեստավորումից առնվազն 3 ամիս առաջ:

26. Ամփոփիչ ատեստավորման առարկայական բանավոր քննության հարցաշարերը կազմվում են տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքերի հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան:

27. Սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված ամփոփիչ ատեստավորման որևէ փուլում անբավարար ստացած կամ չհանձնած շրջանավարտին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննության հաջորդ փուլերին:

28. Ամփոփիչ ատեստավորման ընթացքում որևէ առարկայի քննությունից «անբավարար» գնահատական ստանալը շրջանավարտին չի զրկում մյուս առարկաների քննությունները հանձնելու իրավունքից:

29. Թեզի պաշտպանությամբ ավարտվող ամփոփիչ ատեստավորման դեպքերում էլեկտրոնային թեստավորման անբավարար արդյունք ունեցող շրջանավարտը թեզի պաշտպանության չի թույլատրվում:

30. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպվում է հետևյալ կերպ.

1) հանրային առողջության ֆակուլտետի՝

ա. «Հանրային առողջապահության» մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանվում է «Առողջապահության կառավարում և կազմակերպում», «Համաճարակաբանություն» և «Շրջակա միջավայրի հիգիենա» մասնագիտացումներով մագիստրոսական թեզի պաշտպանություն,

բ. «Բիզնես վարչարարություն» մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանվում է «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրով մագիստրոսական թեզի պաշտպանություն, *(փոփոխություն՝ 27.03.2019, թիվ 04)*

2) Դեղագիտական ֆակուլտետի «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորման աստիճանի համար սահմանվում է «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրոսական

թեզի պաշտպանություն, եթե ուսանողը սույն կանոնակարգին համապատասխան ընտրել է էլեկտրոնային թեստային եղանակով քննության հանձնումը և թեզի պաշտպանություն:

30. Մագիստրոսական թեզի թեմաները որոշում են համապատասխան ֆակուլտետի մասնագիտական ամբիոնները: Թեզի կատարման համար նշանակվում է ղեկավար: Թեզի թեման և ղեկավարի թեկնածությունը ֆակուլտետի ուսումնագիտական խորհրդի կողմից հաստատվում է ամփոփիչ ատեստավորումից առնվազն 9 ամիս առաջ: Թեզը՝ ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման առողջապահական, գիտական, ինչպես նաև հանրային առողջության, ֆարմացիայի, կառավարման մագիստրոսի աստիճան ունեցող մասնագետների կողմից, որոնց կազմը հաստատում է տվյալ ֆակուլտետի ղեկանը: Գրախոսման կարգը հաստատում է ֆակուլտետի ուսումնագիտական խորհուրդը:

31. Մագիստրոսական թեզ պաշտպանող շրջանավարտի վերջնական գնահատականը ձևավորվում է մագիստրոսական թեզի գրավոր, էլեկտրոնային թեստային քննության և թեզի բանավոր ներկայացման գնահատականների միջին թվաբանականից: Արդյունքում ստացվող նիշն ամբողջացվում է: Այս կանոնից բացառություն է կազմում «Բուժհաստատությունների կառավարում» մասնագիտացման համար, որի վերջնական գնահատականը ձևավորվում է մագիստրոսական թեզի գրավոր և բանավոր ներկայացման գնահատականների միջին թվաբանականից: Արդյունքում ստացվող նիշն ամբողջացվում է:

31. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում էրստ հետևյալ պահանջների՝

1) մագիստրոսական թեզի բովանդակությունը բանավոր ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ,

2) թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին հատկացվում է 30 րոպե՝ շրջանավարտին հարցեր տալու և պատասխաններ ստանալու համար.

3) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր անդամները միաժամանակ լսում են միայն մեկ շրջանավարտի պատասխանը.

4) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

32. Ամփոփիչ քննության և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ըստ Համալսարանում ընդունված գնահատման սանդղակի: Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

33. Հիմք ընդունելով սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան ամփոփիչ քննության և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանության դրական (բավարար, լավ, գերազանց) արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

34. Բացասական (անբավարար) արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

35. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 տոկոսը:

36. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

37. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Արձանագրության մեջ նշվում են ամփոփիչ քննությունների և (կամ) մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

38. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից կազմվող արձանագրությունների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

36. Ամփոփիչ ատեստավորումը դրական արդյունքներով հանձնած ուսանողին համապատասխան որակավորում շնորհելու մասին որոշումը կայացվում է

ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ վերջին քննության կամ թեզի պաշտպանության օրը:

37. Շրջանավարտի՝ ռեկտորի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ հաստատված դիպլոմը տրամադրվում է համապատասխան ֆակուլտետի դեկանի կամ դեկանի տեղակալի կողմից վերջին քննությանը հաջորդող 15 օրվա ընթացքում:

38. Շրջանավարտի երդման արարողությունը իրականացվում է ամփոփիչ ատեստավորման ավարտին հաջորդող գիտական խորհրդի նիստի ընթացքում:

4. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

39. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) կարող է Համալսարանում բողոքարկվել և լրացուցիչ քննարկվել համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների՝

1) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ պարզաբանումներ գնահատականի վերաբերյալ.

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում.

3) շրջանավարտը գործնական ունակությունների գնահատման, առարկայական թեստավորման և ամփոփիչ քննության կամ մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկումը կարող է ներկայացնել ամփոփիչ ատեստավորման բողոքարկման հանձնաժողովի նախագահին՝ արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը քննարկումը կազմակերպում է նույն օրը:

40. Բողոքարկման հանձնաժողովը նախապես կազմավորվում է ռեկտորի հրամանով, որի կազմում մտնում են՝

- 1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, որպես նախագահ,
- 2) քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող ուսումնամեթոդական վարչության աշխատողը,
- 3) Համալսարանի ուսանողական խորհրդարանի ներկայացուցիչը,

4) հանձնաժողովի նախագահի կողմից ներգրավված, քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի ամբիոններից նեղ մասնագետներ:

41. Բողոքարկման հանձնաժողովի նախագահը կարող է բողոքարկման նիստերին հրավիրել քննական հանձնաժողովի անդամներին, քարտուղարներին, ինչպես նաև համապատասխան ամբիոնների մասնագետներին և Համալսարանի իրավաբանական բաժնի ներկայացուցչին:

Բողոքարկման հանձնաժողովը՝ բողոքարկող շրջանավարտի ներկայությամբ դիտում է տեսաձայնագրությունը, քննարկում և բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) գնահատականը թողնել անփոփոխ կամ
- 2) գնահատականը բարձրացնել:

42. Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Որոշմանը համաձայն չլինելու դեպքում բողոքարկման հանձնաժողովի անդամը ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

5. ԵԶՐԱՓՈՒՄԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

43. Ամփոփիչ քննությունների որևէ փուլում «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված և «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնում և (կամ) նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ Համալսարանի կողմից սահմանած կարգով և ժամկետներում:

44. Շրջանավարտն ամփոփիչ քննություններ վերահանձնում է միայն այն առարկայից, որից ստացել է «անբավարար» գնահատական կամ չի ներկայացել:

45. Մագիստրոսական թեզը վերահանձնելու ժամանակ շրջանավարտը համապատասխան ֆակուլտետից ստանում է թեզի նոր թեմա և նշանակվում է նոր ղեկավար՝ սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

46. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ռեկտորին և քննարկվում է համապատասխան ֆակուլտետի ուսումնագիտական խորհրդում:

Ամփոփիչ ատեստավորումից հետո Համալսարանը ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:

47. Ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին 5 աշխատանքային օրվա ընթացքում անվճար տրվում է ակադեմիական տեղեկանք, Համալսարանի ռեկտորին՝ շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից դիմում ներկայացնելուց հետո:

48. Ամփոփիչ ատեստավորման որևէ առարկայի քննությունից անբավարար գնահատական ստացած շրջանավարտը հաջորդ ուսումնական տարվա մարտ ապրիլ ամիսներից նախապատրաստվելու նպատակով կամավոր կարող են մասնակցել Համալսարանում վճարովի հիմունքներով կազմակերպվող դասընթացների:

49. Ամփոփիչ ատեստավորման ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է, որը Համալսարանում պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո առնվազն 6 ամիս:

50. Ռազմաբժշկական ֆակուլտետից հեռացված շրջանավարտները չեն կարող վերականգնվել նույն ֆակուլտետում:

* * *